

Ա.Գ. ՍԵՏՐՍՅԱՆ

**ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ ЕДИНИЦЫ, ВКЛЮЧАЮЩИЕ
КОМПОНЕНТЫ “ОГОНЬ” И “ЗЕМЛЯ” В АРМЯНСКОМ, РУССКОМ И
АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ**

Рассматриваются фразеологические единицы, включающие компоненты “огонь” и “земля” в армянском, русском и английском языках. Представлены семантические, структурные, грамматические сходства и различия, которые зависят от структурных особенностей данных языков и языкового мышления разных народов.

Ключевые слова: фразеологическая единица, компонент, семантический, грамматические различия, структурные особенности.

H.G. PETROSYAN

**PHRASEOLOGICAL UNITS WITH THE COMPONENTS *FIRE* AND *SOIL*
IN ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH**

Phraseological units with the components *fire* and *soil* in Armenian, Russian and English have been considered. Semantic, structural, grammatical similarities and differences have been introduced which depend on structural peculiarities of the mentioned languages and linguistic thinking of different nations.

Keywords: phraseological unit, component, semantic, grammatical differences, structural peculiarities.

ՀՏԴ 81'367.626:1

Հ.Կ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Ուսումնասիրվում է պատմահամեմատական լեզվաբանության հարցադրումներից մեկը՝ անձնական դերանունների ծագումը: Հետազոտության հիմք է ընդունվել այն փաստը, որ աշխարհի գրեթե բոլոր լեզուներում դերանուններն առաջացել են գոյականներից: Որոշ լեզուներում դերանունները դեռևս պահպանել են իրենց նախնական իմաստը, իսկ որոշ դեպքերում գոյականն առայսօր գործածվում է իբրև դերանուն: Ուսումնասիրության նյութ են դարձել տարբեր լեզվաընտանիքների, հատկապես հնդեվրոպական և ֆիննաուգրական լեզվաընտանիքների լեզուները: Ենթադրվում է, որ հնդեվրոպական անձնական դերանունների *man* և *ego* տիպերն առաջացել են գոյականներից, որոնց նախնական իմաստն է եղել՝ *մարդ*, *հոգի*:

Առանցքային բաներ. պատմահամեմատական լեզվաբանություն, անձնական դերանուններ, հնդեվրոպական լեզուներ, ֆիննաուգրական լեզուներ, նախնական իմաստ, դերանունների ծագումը:

Ավելի քան երկու հարյուրամյակի պատմություն ունեցող հնդեվրոպական լեզվաբանությունը շարունակում է բազում խնդիրներ առաջադրել: Հնդեվրոպա-

բանության առեղծվածներից մեկը առաջին դեմքի եզակի թվի դերանվան ծագման հարցն է: Այն հնարավոր չէ մեկ ընդհանուր ձևի հանգեցնել, քանի որ տարբեր լեզվաընտանիքի լեզուներում այդ ձևերը խիստ տարբեր են: Թերևս սա այն խնդիրներից է, որի լուծման համար նպատակահարմար է ներառել նաև այլ լեզվաընտանիքների հետ արտաքին համեմատության տվյալները:

Հ.-ե. լեզուներում 1-ին դեմքի եզակի թվի դերանունն ունի հետևյալ ձևերը, որոնք կարելի է ներկայացնել մի փոքր խմբավորած.

ա/ խեթերեն *āk*, սանսկրիտ *अहम् (aham)*, լատիներեն *egō/ego*, հին հունարեն *ἐγώ*, գոթերեն *ik*, հայ. ես, օսերեն *æz*, լատիշերեն *es*, լիտվերեն *ąš*, ալբաներեն *unë*, հին սլավոներեն *azъ*: Այս և մի շարք այլ ձևերի հիման վրա հնդեվրոպաբանության մեջ վերականգնվել է **h₁eg* կամ **eg(h)o(m)* ձևը: Այլ հ.ե. լեզուներում ունենք. գերմ. լեզուներ. հոլանդ.՝ *ik*, գերմ.՝ *ich*, հին անգլ.՝ *ic*, անգլ.՝ *I*, իսլանդ.՝ *ég*, նորվեգ., դանիերեն՝ *jeg*, շվեդ.՝ *jag*, ռոմանական լեզուներ. Իտալ.՝ *io*, ֆրանս.՝ *je*, իսպան.՝ *yo*, պորտուգալ.՝ *eu*, ռումին.՝ *eu*, նաև թաիշ.՝ *az*, լեհ., չեխ., սերբ.՝ *ja*, մակեդոն.՝ *jac*, բուլղար.՝ *az*, ռուս., ուկր., բելոռուս.՝ *я*, և այլն:

բ/ Հինդի *मैं [mæn]*, պարսկ. *man*, տաջիկ. *ман* «ես, իմ», քրդ. *min (ez)*, գնչու. *me*, կելտ. լեզուներում՝ բրետոն. *me*, կորն. *my*, վալի. *mi*, *fi*, իռլանդ. *me*, *mise*, շոտլանդ. *mi*, *mise*, Մեն կղզու լեզվում՝ *mee*, *mish*:

ա/ խմբի լեզուներում թեքված ձևերը կազմվել են բոլորովին այլ հիմքից՝ **me-*, որը համընկնում է բ/ խմբի լեզուների ուղղական հոլովին: Այս արմատը հայտնի է գրեթե բոլոր հ.-ե. լեզուների եզ. թվի թեքված ձևերում. լատին.՝ *meī*, *mihī*, *mē*, գոթ.՝ *meina*, *mis*, *mik*, հ.բ.գ. գերման.՝ *mir*, *mich*, հին անգլ.՝ *mīn*, *mē*, *mec*, իսլանդ.՝ *min*, *mér*, *mig*, շվեդ., դան.՝ *mig*, լատիշ.՝ *manis*, *man*, *mani*, լիտվ.՝ *manėš*, *mán*, *manė*, սանսկրիտ՝ *मम/मै [mama/me]*, *मम/मा [mam/mā]*, օս.՝ *mænæn* (եզ. թիվ, տր. հ.), *maxæn* (հոգն. թիվ, տր. հ.), հին սլավոն.՝ *мене*, ռուս.՝ *меня*, *мне*, և այլն, ինչպես նաև հայերեն հոգն. թվի ուղղականում՝ *մենք/մեք*, լատիշ.՝ *mēs*, լիտվ.՝ *mės*, հ.սլավոն.՝ *мы*, չեխ.՝ *my*, օս.՝ *max*, տաջիկ.՝ *моён/моён*: Բազմաթիվ լեզուներում այս արմատից են ստացական դերանունները՝ լատիշ.՝ *mans*, իսլանդ.՝ *minn*, հոլանդ.՝ *myn*, դան., նորվեգ.՝ *min*, գոթերեն՝ *meins*, գերման.՝ *mein*, հ. անգլերեն՝ *mīn*, անգլ.՝ *my/mine*, ռուս.՝ *мой*, բոլորը «իմ» նշանակությամբ:

Ալբաներենի (*unë*) և թոխարերենի ձևերը (*թոխ*. *U nās*, *nuk*, *թոխ*. *Բ nas*) բոլորովին տարբեր են և, թերևս, առանձին քննության առարկա են:

Ներկայումս լեզվաբանները համակարծիք են այն հարցում, որ դերանունը՝ որպես ձևաբանական կատեգորիա, նախապես մարդկային լեզվում գոյություն չի ունեցել: Այն այլ ձևաբանական միավորների զարգացման արդյունք է:

Դերանունների, մասնավորաբար՝ անձնական դերանունների ծագման հարցը կարիք ունի տարածամանակյա տիպաբանական նյութի ներառմամբ լուսաբանման: Առայսօր, սակայն, դերանունների ծագման հարցը հանգեցվում է ցեղակից լեզուների տարբեր ճյուղերի, լեզվաընտանիքների, անգամ նոստրատիկ մակրոընտանիքի բաղկացուցիչը համարվող լեզվաընտանիքների համար ընդհանուր նախաձևեր ստեղծելուն: Այդ նախաձևերը, ըստ էության, դերանվանական ձևերի միջինացված տարբերակներ են, որոնք, եթե անգամ ճշգրիտ լինեն, համեմատաբանությանը ոչինչ չեն տալիս: Դրանք չեն պատասխանում այն հարցին, թե ինչու՞ են այդ ձևերը տարբեր միևնույն լեզվաընտանիքում. Օրինակ՝ լատ. *ego* և պարսկ. *man*, ֆինն. *minä* և հունգար. *én*, անգամ հին և նոր հնդկ.՝ սանսկրիտ *अहम्* [*aham*] և հինդի *मैं* [*mæ̃*]: Համեմատական հետազոտություններով չի պարզվել նաև այդ դերանունների նախնական իմաստը:

Դերանունն ինքը վերացարկում է, այն կարող է առաջանալ միայն, երբ լեզվի կրողը վերանում է բառի կոնկրետ, առարկայական իմաստից: Հ. Աճառյանը նշում է, որ դերանունը մարդկային լեզվի մեջ ամենաուշ առաջացած խոսքի մասն է: Ապացուցված է նաև, որ առաջանալով գոյականներից, դերանուններն այնուհետև կարող են մեծ կայունություն դրսևորել և հարյուրավոր, հազարավոր տարիներով գրեթե անփոփոխ պահպանվել լեզուներում: Դերանունները ցանկացած լեզվի հիմնական բառաֆոնդի անբաժան մասն են և մշտապես առկա են համեմատական ուսումնասիրություններում:

Այնուամենայնիվ, որոշ լեզուներում ժամանակային տիրույթը խիստ մեծ է, որով և դժվարանում է դրանց նախնական իմաստի բացահայտումը: Խոսքը վերաբերում է հատկապես հնդեվրոպական լեզուներին: Իբրև հ.-ե. նախաձև վերականգնված **mene* «ինձ, *меня, мне*» դերանվան տարիքը հաշվարկվում է ոչ պակաս քան 10000 տարի [1, 121]: Անձնական դերանունների (և առհասարակ դերանվան) ծագման հիմնական աղբյուրը համարվում է գոյականը [2], [1, 121]: Անձնական դերանունները, սակայն, իբրև քերականական դաս կամ խոսքի մաս, լեզվաբանական ընդհանրույթ չեն, այսինքն՝ կան լեզուներ, որտեղ այդպիսի խոսքի մաս գոյություն չունի (վիետնամերեն, թաի, բիրմաներեն) [1, 121]: Նման լեզուներում դերանվան իմաստն արտահայտվում է այլ բառերով, որոնք հետագայում կարող են դառնալ դերանուններ և կազմել դերանունների քերականական դասը: Այդպիսիք են հարավ-արևելյան Ասիայի, Աֆրիկայի և Ավստրալիայի մի շարք լեզուներ: Հետևաբար, հ.-ե. լեզուների բառաքննական հետազոտություններ կատարելիս անհրաժեշտ է գործադրել արտաքին համեմատությունների մեթոդի հնարավորությունը:

Հ.-ե. դերանունների հնագույն արմատներն արտահայտում են միայն վերացական՝ դերանվանական իմաստ, և ստուգաբանորեն դժվար է դրանք կապել գոյականների հետ: Այդպիսին է դերանունների բնույթը նաև ուրալյան լեզուներում: Այնուամենայնիվ, հ.-ե. լեզուներում նկատվում են գոյականների՝ դերանվան վերածվելու որոշ փաստեր: Օրինակ, գերմ., շվեդ., նորվ., դան. man, հոլ. men, իսլանդ. maður դերանունները ծագում են գոյականից (գերմ. Mann, նորվեգ. mann, շվեդ. man և այլն): Անգլերեն somebody, anybody, nobody դերանուններում -body արմատը նշանակում է «մարմին»:

Կ. Մայտինսկայան նշում է, որ շատ լեզուներում անդրադարձ դերանունները ծագում են «հոգի, մարմին, գլուխ» նշանակող բառերից: Օրինակ, հ.հնդկ. ātman անդրադարձ դերանունը ունի նաև «հոգի» իմաստը: Մորդվիներեն pr'a-անդրադարձ դերանունը ծագում է pr'a «գլուխ» բառից: Տիբեթի լեզվում pho «արու» և mo «էգ» գոյականներն օգտագործվում են իբրև 3-րդ դեմքի դերանուն [3, 54]: Հունգարերեն maga դերանունը, որ նշանակում «ինքն իրեն, Դուք» ծագում է mag «սերմ, կորիզ, միջուկ, էություն» նշանակությունը կրող բառից:

Արտաքին համեմատությունը փորձենք կատարել հետևյալ ուղղություններով:

Առաջին. Ինչպես նշվեց, դերանունները գոյականների համեմատ վերացարկման ավելի բարձր մակարդակ են ենթադրում, և առաջացել են գոյականից և բայից հետո: Որոշ ուսումնասիրողներ ուշադրություն են դարձրել այն փաստին, որ երեխաները դերանուններն սկսում են գործածել այլ խոսքի մասերի համեմատ շատ ավելի ուշ [3, 54]: Փորձենք պարզել, թե արդյոք կա՞ն լեզուներ, որոնցում դերանուններն ունեն ավելի կոնկրետ, առարկայական իմաստ: Տիպաբանական քննության հարուստ նյութ են պարունակում Հարավ-արևելյան Ասիայի մի շարք լեզուներ: Որոշ լեզուներում դերանուններն արտահայտվում են այլ միջոցներով, օրինակ, գոյականի միջոցով: Կ. Բաբաևը նշում է, որ այս երևույթը տարածված է նաև Աֆրիկայի և Ավստրալիայի մի շարք լեզուներում [1, 121]:

Օրինակ, ինդոնեզ. saya «ես» դերանունը ծագում է մալայ. «ծառա» բառից, վիետնամ. tôi, tở «ես» նույնպես «ծառա» իմաստից է բխում: Պոլինեզյան աչեխ լեզվում ulon «ես» դերանվան նախնական իմաստն է «ստրուկ», կխմեր լեզվում՝ khjsum «ես» < «ստրուկ»: Ժամանակի ընթացքում այս բառերն ընդունել են «ես» իմաստը, իսկ նախնական իմաստը մթազնել է: Հետաքրքրական է, որ 2-րդ դեմքի դերանունը երբեմն նշանակում է «տեր, իշխան». բիրման. hyin «դու» < «տեր», minx «դու» < «թագավոր», թաի naaj «դու» < «տեր», ճապոն. kimi «դու» < «տեր, կայսր»: Ավելի հաճախ դերանունները ծագում են չեզոք իմաստ ունեցող գոյականներից [1, 122]:

Ամենատարածված երևույթը, ինչպես նշում է Կ. Բաբանը, 1-3րդ դեմքերի դերանունների ծագումն է այն գոյականներից, որոնք նշանակում են «մարդ» կամ «մարմին» [1, 123]:

Օր. բիրման. *kow* «ես» նախապես նշանակել է «մարմին», հարավամերիկյան վարի լեզվում *wari* «մարդ» նաև «մենք» իմաստն ունի:* Արգենտինյան գուայկուրու լեզվում *qomi* «մենք» դերանունն առաջացել է *qom* «մարդիկ» բառից, որին ավելացել է *-i*- հոգնակիակերտ կազմիչը: Նիլո-սահարյան լեզվաընտանիքի նգիտի լեզվում *ale* «մարդ» բառը վերածվել 1-ին դեմքի եզ.թ. դերանվան [1, 123]:

Աճառյանը նշում է, որ սումեր. *lu* «մարդ» բառը գործածվում է նաև «ես» իմաստով, *ka* «բերան» բառը նշանակում է նաև *lu* «դու», *im* «շունչ» /որից *im-zu* «շունչդ»/ նաև «դու» իմաստը ունեն: Նոր պարսկերենում սովորական է «ես» ասելու փոխարեն գործածել *banda* «ծառա» բառը (*banda raftan* «ես գնացի»): Ճավայերենում *kula* «ես» նշանակում է «ծառա» [2,2]:

Երբեմն գոյականը գործածվում է իբրև դերանուն՝ պահպանելով նաև նախնական իմաստը: Օրինակ, վիետնամ. *anh* «դու» և *em* «ես» բառերը նշանակում են և՛ «ավագ եղբայր», և՛ «կրտսեր քույր»: Նույն վիետնամ *moih* «մարմին, ինքը» բառն օգտագործվում է իբրև դերանուն բոլոր 3 դեմքերի համար:

Որոշ դեպքերում անձնական դերանուններն առաջանում են «ինքը» անդրադարձ դերանունից, որն իր հերթին տարբեր լեզուներում ունեցել է «մարմին, մարդ, գլուխ, հոգի, սիրտ» իմաստները:

Օրինակ, մանջուր. *mini beye* «ես ինքս», *sini beye* «դու ինքդ», *ini beye* «նա ինքը», *beye* բառի իմաստն է «մարմին, անձ» [2, 106], աֆրիկյան կանուրի լեզվում *wu kēlani* «ես ինքս» (ես գլուխս), *ni kēlanum* «դու ինքդ», *ši kēlanse* «նա ինքը» [2, 107], աֆրիկյան բանտու լեզուներից՝ կազուրու լեզվում *munda* «փոր», *mtima*, *moyo* «սիրտ» բառերն օգտագործվում իբրև անդրադարձ դերանուն, բերբերական կաբիլ՝ *iman* «հոգի, անձ», բերբերական տամաշեկ՝ *iman* «հոգի, անձ, անհատ» բառերը՝ իբրև անդրադարձ դերանուններ [2, 112-113]:

Ասուր. չկա անդրադարձ դերանուն, գործածվում են *ramana* «անձ» և *napiš tu* «հոգի», արաբ. *nafs* «անձ» բառերը: Յակուտ. *beye* բառով, որի նախնական իմաստն է «մարմին», կազմվում են անդրադարձ դերանուններ. *beyem* «ինքս» *beyete* «ինքը» [2, 113]: Այսպիսի օրինակները շատ են. Լազ. *թի* «գլուխ» բառով *թի չքիմի* «ես ինքս», *թի սկանի* «դու ինքդ», վրաց. თავი [թավի] «գլուխ» >

* Հետաքրքրական երևույթ է, երբ *մարդ* իմաստը կրող բառը որոշ լեզուներում փոխանցվել է նաև տվյալ ազգի կամ ցեղի անվանմանը: Այդպիսի օրինակներ տեսնում ենք հնասիական այնու և նիվի լեզուներում, ուր *այնու* և *նիվի* համապատասխանաբար նաև *մարդ* են նշանակում, նույնն է մարիերեն *марий* «մարդ»:

«ինքը», տօցօն տօցօն [թավիս թավս] «ինքն իրեն», տօցօճ [թավադ] «ես ինքս», լիտվ. pats «տեր» > «ինքը», և այլն [2, 112-113]:

Այսպիսով, Հ. Աճառյանի նշած լեզուներում անձնական կամ անդրադարձ դերանունների նախնական նշանակություններն են՝ *մարդ, հոգի, անձ, մարմին, բերան, ծառա*:

Ըստ Կ. Բաբանի՝ գոյականներից առաջացած դերանունների նախնական իմաստներն են՝ *ինքը մարդ, մարդիկ, մարմին, ստրուկ, ծառա* (1-ին դեմք), *մարդ, մարդիկ, մարմին, տեր, պարոն, առարկա, մնացյալ* (2-րդ դեմք), *մարդ, առարկա, մնացյալ* (3-րդ դեմք) [1, 131]:

Բրազիլական պորտուգալ. «մենք, մեզ» դերանունների փոխարեն գործածվում է *a gente* «մարդիկ, ժողովուրդ» բառը:

Երկրորդ. Վերոբերյալը նկատի առնելով, թերևս, կարելի է քննության առնել «մարդ» կամ «հոգի» նշանակությամբ բառերը տարբեր լեզուներում: Գերմանական լեզուներում մեծ տարածում ունեցող *man* բառի զուգաբանությունների վերաբերյալ չեխ լեզվաբան Վացլավ Բլաժեկի հոդվածին [4] հղում անելով՝ կարելի է ներկայացնել հետևյալը:

Անգլ. *man* «մարդկային էակ, այր մարդ» (հոգն. *men*) բառը այս զաղափարն արտահայտող հնագույն արմատներից է հնդեվրոպական լեզվաընտանիքում: Հին անգլ. ներկայացված է *man(n)*, *mon(n)*, *mann*, *monna* ձևերով (հոգն. *menn*), հին բարձր գերմ. *man*, հոլանդ. *man*, գերման. *Mann*, իսլանդ. *maður*, հին սկանդինավ. *maðr* (ենթադրվում է < *mannR, սեռ. h. *manns*, հոգն. *menn*) նորվեգ. *mann*, շվեդ. *man*, դան. *mand*, գոթ. *mann* (սեռ. h. *mans*, հոգն. *mannans*): Գերման. լեզուներում այս արմատը իր տարբերակներով նշանակում է «մարդ, այր մարդ կամ ամուսին»: «Մարդկային էակ, մարդ արարած» իմաստով ունի նաև հետևյալ ձևերը՝ հին ֆրիզ. *mānn(i)ska* h.անգլ. h.սաքսոն. *mennisco* h.p.g. *mannisco*, *mennisco*, գերմ. *Mensch*, ինչպես նաև գոթ. *mannisks*, h.p.g. *mennisk*, h.սկանդ. *mennskr*, h.անգլ., h.սաքս. *mennisc*, որոնք ածականներ են՝ կազմված *-isk-* ածանցով. Նախնական իմաստն է «մարդկային ցեղին պատկանող, մարդազգի»: Հնդիրանական ձևերն են՝ սանսկրիտ *मनुष्य* [*manuṣya*] «մարդ», *मन्* [*man*] «մտածել», *मनस्* [*manas*] «ոգի, հոգի, միտք, բանականություն», *मनु* [*manu*] «իմաստուն», հինդի *मनुष्य* [*manuṣya*] «մարդ», ավեստ. անձնանուն *Manuš.čipra* «Մանուշից սերված», միջին պարսկ. *Manuščih* (հայ. Մանաճիհր) օսեթ. *moj/mojnä* «ամուսին»:

Այս արմատը կապվում է նաև հին սլավոն. *možī* «այր մարդ, ամուսին» բառի հետ, այլ սլավոն. լեզուներում՝ բուլղար. *máž*, սերբ. *muž*, սլովեն. *mož*, ռուս. *muž*, լեհ. *maż*:

Վ. Բլաժենկը նվազ արժանահավատ է համարում այլ հ.-ե. լեզուներում առկա ձևերը, թեպետ ներկայացնում է նաև դրանք. հայերեն *մանչ*, հուն. *μόνος* «մենակ, միայն», որի համարժեք են համարվում հայերեն *մանր/սեռ.հ. մանու/, մանուկ* բառերը, լատիներեն *mās* (**manus* >**mans* > *mās*) «այր մարդ», կելտ. լեզուներում՝ բրետոն. *mān* «անձ, մարդ», բարդություններում *mor-van*, հին բրետոն. *mōrman* «նավաստի», գալլ. *-mannus*, *Catu-mannos*, *Ario-manus*, թոխար. *A māñīe*, *B mañīye*, *mañīye* «ծառա, ստրուկ»:

Անհրաժեշտ է նշել, որ դրանք, այնուամենայնիվ, արժանահավատ են, և երբեմն իմաստային ու քերականական տեղաշարժի դիտարժան օրինակներ են, որի մասին կխոսվի ստորև:

Հին սկանդինավ. լեզվում կա հիշատակության արժանի իմաստային տեղաշարժ՝ *man* նաև նշանակում է «ծառա»: Միևնույն իմաստն ունի նաև հ. պարս. *māniya-* «տնային ծառա»: Դան. *mand* բառը նշանակում է «մարդ, այր մարդ, ամուսին, նաև՝ զինվոր»:

Այլ լեզվաընտանիքների լեզուներում վերոհիշյալ արմատը ձեռք է բերել հետևյալ իմաստները. աֆրո-ասիական լեզուներում՝ *մարդ, ժողովուրդ, ռազմիկ, եղբայր, քույր, ամուսին, անձ*: Իմաստի այս փոփոխությունը, որը նաև քերականական իմաստի փոփոխություն է, ինչպես նշվեց, հանդիպում է նաև գերման. լեզուներում, որտեղ *man* գոյականը վերածվել է անորոշ-անձնական դերանվան՝ գերմ. *man kann* «կարելի է», *man kann hier nicht rauchen*, բառացի՝ մարդ չի կարող ծխել այստեղ*, *Wie schreibt man dieses Wort?* «Ինչպե՞ս է գրվում այս բառը», դան. *man kan* «կարելի է», *man siger* «ասում են», շվեդ. *man säger*, նորվեգ. *man sier* «ասում են»: Անգլերեն. միևնույն իմաստն ունի *one* դերանունը. *One never knows...* «Հայտնի չէ, մարդ չգիտի, թե...»

Հունգար. *ember* «մարդ» բառը միտում ունի վերածվելու անորոշ-անձնական դերանվան:

Ֆիննաուգրական լեզուներում՝ ֆինն. *mies/miehe-*, էստոն. *mees/mehe-* ունեն «մարդ, այր մարդ» նշանակությունը: Հունգար. *magyar* < *megyer* «հունգարացի» բառը նույնպես կապվում է այս արմատի հետ:

Վերոբերյալ օրինակներին են առնչվում նաև ֆիններեն *miniä*, *minjä* «որդու կինը», լապ. *mānņje* ~ *mānje* «նույնը», զիրյան. *mon* «նույնը», նաև՝ եղբոր կինը, վոզոլ. *miń* «որդու կինը», օստյակ. *meń*, հունգար. *mèny* «որդու կինը» [5]:

* Ուշադրության արժանի է այստեղ հայերեն մարդ բառի գործածությունը անորոշ առումով: Ըստ էության, *մարդ կարող է մոլորվել, մարդ կգժվի* և այլ նման կազմություններում հայերենի *մարդ* բառը նույն գործածությունն ունի ինչ գերմանական լեզուներում *man* անորոշ դերանունը, այսինքն՝ գործածվում է դերանվանաբար /ցանկացած մարդ, որևէ մեկը/, թեպետ հայերենում ընկալումն այդպիսին չէ:

Ուշադրության արժանի են՝ եգիպտական արձանագրություններում *mn* «ինչ-որ մեկը» ղպտ. *man* «ինչ-որ մեկը, ինչ-որ բան», դրավիդ. թամիլ. *man* «թագավոր, զինվոր, տեր, ամուսին», մալայալամ *mannan* «թագավոր», կաննադա *manneya* «հրամանատար, առաջնորդ», հին ճապոն. *mōno* «մարմին, անձ, ձև», բասկ. *mene, mena* «գորություն, իշխանություն», շումեր. *man* «եղբայր, ընկեր, երկուսն էլ» *min, man* «այլ, ուրիշ»:

Ուշագրավ են նաև տունգուս. **mēn* «մենակ, ինքը», կորեերեն *mōm* «մարմին, անձ, ձև», հին ճապոն. *mōno* «անձ, ոգի, իր» արմատները:

Աշխատանքում մենք ձեռնպահ կմնանք այս արմատի՝ աշխարհի տարբեր լեզուներում գոյություն ունեցող համարժեք տարբերակները մեկնաբանելուց: Դրանց մի մասում իմաստային նկատելի տեղաշարժ կա, որը քննարկվող նյութին չի առնչվում: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ *h.-ե.*, ալթայան, ուրալյան, կովկասյան, ավստրոնեզիական, ամերիկյան մի շարք լեզուներում *man* արմատն ունի հետևյալ իմաստները՝ *մարդ, այր մարդ, թագավոր, զինվոր, տեր, ընկեր, եղբայր, մարմին, անձ, հոգի, ինչ-որ մեկը*: Որոշ լեզուներում այս արմատն ունի նաև արդեն վերացարկված՝ դերանվանական իմաստ կամ ցույց է տալիս *մեկ* թվականը:*

Այսպես, հինդի *मैं* [*mæ̃n*], պարսկ. *man* «ես» համապատասխանում են հուն. *μόνος* «մենակ, միայնակ», հայ. *մեն-ակ բառերին*: Հունգար. դերանվան արմատից ծագում են *maga* անդրադարձ դերանունը, *maganos* «միայնակ» և *magan* «մասնավոր, անձնական» բառերը: Այսինքն՝ *mag* նշանակում է նաև «մեկ»:

Վ. Բլաժեկը համեմատության նյութ է դարձրել տարբեր լեզվաընտանիքների բառային նյութը, սակայն զերծ է մնացել քերականական տեղաշարժի, այսինքն՝ բառերի քերականական իմաստի փոփոխության հարցը քննելուց, որը տվյալ աշխատանքի խնդիրը չի եղել: Քերականական տեղաշարժը երևում է նույնիսկ *h.-ե.* լեզվաընտանիքում կատարվող ներքին համեմատությունից՝ գոյական > դերանուն (*Mann* > *man/mein*): Հ.-ե. լեզուների *p/* խմբին բնորոշ դերանվանական տարբերակը (հինդի *मैं* [*mæ̃n*], պարսկ. *man*) գտնում ենք նաև այլ

* Մեծ հետաքրքրություն են ներկայացնում *h.-ե.* և *Ֆ.-ու.* որոշ լեզուներում մեկ թվականը նշանակող բառերը՝ սանս. *एक* [*eka*], հինդի *एक* [*ek*], ֆարսի *yek/yak*, քրդ. *yek/êk*, ֆինն. *yksi*, էստոն. *üks*, մար. *икте*, մանս. *ak*a*, հունգար. *egy*, սամ. *okta*, մորդվին *вейке//фкя*, բոլորը նշանակում են «մեկ»: Չարմանայի զուգադիպությամբ դրանք նման են *h.-ե.* լեզուների եզ. թ. 1-ին դեմքի դերանվանը: Եվ հետաքրքիր է, որ վերոհիշյալ լեզուներում այդ դերանունը արտահայտված է մյուս տիպով՝ հինդի *मैं* [*mæ̃n*], պարս. *man*, տաջիկ. *ман* «ես, իմ», քրդերեն *min* (*ez*), գնչուերեն *me*, ֆինն. *minä* «ես», էստոներեն *mina* «ես», մորդվին. *мон* «ես», մարիերեն *мый//мьинь* «ես»:

լեզվաընտանիքներում: Այսպես, ֆինն. *minä* «ես», *me* «մենք» (թեքված ձևերն են՝ *minun*, *minut*, *minua*, *minussa*, *minusta*, *minulla*, *minuun*, *minulta*, *minulle*, *sinuna*, *minuksi*), էստոն. *mina* «ես», *meie* «մենք» (թեքված ձևերն են՝ *minu*, *minud*, *minusse*, *minus*, *minust*, *minule*, *minul*, *minult*, *minuks*, *minuni*, *minuna*, *minuta*, *minuga* – 14 հոլով), կարել., վեպս. *minä* «ես», իժորերեն *miä* «ես», *mö* «մենք» *miun* «իմ», *meijen* «մեր», մորդվին. *mon* «ես», *min'* «մենք», մարիերեն *мый//мѣнь* «ես», ուղմուրտ. *мон* «ես», սաամ. *mun* «ես», *moai* (երկակի թիվ), *mii* «մենք», խանտ. (օստյակ լեզու) *ma* «ես», *mīn* (երկակի թիվ), *mej* «մենք», հունգար. *mi* «մենք»: Կոմի լեզվում կան՝ *me* «ես» (թեքված ձևերում՝ *менам*, *меным*, *менö* և այլն), *mi* «մենք» (թեքված ձևերում՝ *миан*, *мианлы*, *мианöн* և այլն):

Սամոդիական լեզուների տվյալներն են՝ նենեց. *мань* «ես», *маня*, *мани* «մենք», նգանասան. *мәнә* «ես», *мын* «մենք», էնեց. *модь* «ես», *модьна* «մենք», սելկուպ. *мат* «ես», *ми* «մենք» կամասին. *ман* «ես», *миште*, *ми* «մենք»:

Վերոբերյալ արմատը իբրև 1-ին դեմքի դերանուն տարածված է նաև ալթայյան լեզուներում՝ յակուտ., թաթար., բաշկիր., խակաս. *мин*, ուզբեկ., թուրքմեն., կիրգիզ. բալկար., կարաչայ., տուվին. *мен*, թուրք. *ben* «ես»:

Կովկասյան լեզուներում գտնում ենք՝ վրաց. *me*, մեգրեկ., լազ. *ma*, սվան. *mi*, բոլորը նշանակում են «ես»:

Նոստրատիկ լեզվաընտանիքի համատեքստում հ.-ե. լեզվաընտանիքի 1-ին դեմքի եզ.թ. **me* նախաձևը (թեքված ձև) համեմատվում է ալթայյան **bi*, **man*, քարթվել. **men*, ուրալ. **mV* նախաձևերի հետ (V-ն չտարբերակված ձայնավորն է): Նոստրատիկ մակրոընտանիքի համար վերականգնվում է նաև **mVn*- «մարդ, այր մարդ» ձևույթը (հ.-ե. *manu*- «մարդ», ֆ.-ու. **mañčV* «մարդ, այր մարդ», դրավիդ. **man* «այր մարդ, ամուսին», աֆրո-ասիական *mVn*- «այր մարդ») [1, 132]:

Այն, որ շատ դերանուններ հնում գոյականի իմաստ են ունեցել, կարելի է ցույց տալ նաև այլ օրինակներով: Գերմաներեն *Werwolf* «մարդագայլ» բառի առաջին բաղադրիչը ևս նշանակում է «մարդ», սակայն ժամանակակից գերման. *wer*-ը դերանուն է: Վերը նշված *Mann* > *man* անցումը գերման. ևս այս երևույթի տիպական օրինակ է: Նույնն է հ.անգլ. *werwulf* «մարդագայլ» բարդությունը, որի 1-ին բաղադրիչն այսօրվա անգլեր. նույնպես «մարդ» է նշանակում:

Աճառյանը բերում է իռլանդ. *infer* և գալլ. *y gwr* բառերի օրինակը: Սրանց բուն իմաստն է՝ «այր, մարդ», սակայն դարձել են հարաբերական դերանուններ, իսկ գոյականի իմաստը մթազնելով՝ կորել է:

Հայ. *որեար* «մարդիկ» բառի եզակին է *որ* (Աճառ., ՀԱԲ), այն այսօր գործածվում է իբրև դերանուն: Այս արմատի զուգաբանություններն անչափ շատ

են, գոթ. wair, հ.բ.գ. wer, հ. Իռլանդ., fer, շոտլանդ. fear, Մեն կղզի fer, լատին. vir, ումբր. ueiro լիտվ. v́yras, սանսկրիտ virá-, ավեստ. vira-, ինչպես նաև հուն-գար. férfi «այր մարդ», férfj «ամուսին»: Գերման. Werwolf բառի Wer արմատի ուղիղ զուգահեռն է ,հ. անգլ. wer բառը, որ նշանակում է «(այր) մարդ, ամուսին, հերոս, արարած» [6], [7], [8]: Հ.անգլ. wercyn բառը /հմմտ. հայ. որ «մարդ» + ծիւ/ նշանակում է «մարդկային ցեղ» [9]:

Ինչ վերաբերում է պայմանական mVn արմատին (V-ն փոփոխվող ձայնավորն է), որը տարբեր լեզուներում ունի man, men, min և մի շարք այլ տարբերակներ, ապա դերանունն դարձած որոշ ձևեր կորցրել են ոչ միայն նախնական իմաստը, այլև որոշ հնչյուններ, որոնք դյուրին է վերականգնել մնացած ձևերի միջոցով: Ենթադրելի է ո-ի անկումը և ոչ թե հավելումը, քանի որ գոյական > դերանուն անցման դեպքում բնորոշը հնչյունների անկումն է. հաճախակի գործածվող բառերում (դերանուն, հող, նախդիր, կապ և այլն) տեղի է ունենում հնչյունների թուլացում և անկում:

Կարելի է ենթադրել, ուրեմն, որ mVn արմատը, որն ընկած է վերոհիշյալ դերանունների հիմքում, նշանակում է *մարդ* կամ *այր մարդ*:

Որոշ լեզուներում հոգնակի թվի դերանունն ունի հետևյալ ձևերը՝ հայ. *մեք/մենք*, օս. max [մախ], տաջիկ. моён/моxon [մոյոն/մոհոն]: Ֆինն. բայերի խնարհման հարացույցում (օրինակ, näemme «տեսնում եմ», näette «տեսնում ես») ֆիննաուգրագետները վերականգնում են *näemmek և *näettek ձևերը, որտեղ *mek և *tek me «մենք» և te «դուք» դերանունների հնագույն ձևերն են [10]: Ինչպես ֆիններենում, այնպես էլ ֆիննաուգրական այլ լեզուներում k-ն հոգնակի թվի ցուցիչ է: Նույնը վերաբերում է հայերեն *մեք/մենք* դերանվանը, օսերենի և տաջիկերենի ձևերին*:

Երրորդ: Ելնելով վերոբերյալից, փորձենք կոահել, դիցուք, լատ. ego արմատի սկզբնական իմաստը: Նախ, ուշադրություն դարձնենք այն փաստին, որ միևնույն դերանվանական ձևը տարբեր լեզուներում «տեղաշարժվում է»: Միևնույն ձևը կարելի է գտնել մի դեպքում ուղղական հոլովում, մեկ այլ դեպքում՝ թեքված հոլովներում կամ հոգնակի ուղղականում, երբեմն նույնիսկ հարաբերական և հարցական դերանունների մեջ /հայ.՝ *ես – մենք*, ռուս. он – ego/: Որպես հ.-ե. լեզուների նախաձև ընդունված են *h₁egʷ, *h₁egʷ-(o)H, *h₁egʷ-H-om [11], *h₁egʷ- + e/oH [12] և մի քանի միմյանցից գրեթե 11], չտարբերվող ձևեր:

* Նկատի առնելով man արմատի բացառիկ հնությունը, ինչպես նաև համապատասխան դերանվանական ձևերը տարբեր լեզուներում, կարելի է ենթադրել, որ հայերեն *մեք/մենք* ձևերը զուգահեռաբար գործածվել են հայոց լեզվի վաղնջական շրջանում, այսինքն՝ աշխարհաբարի և բազմաթիվ բարբառների *մենք* ձևը նորամուծություն չէ:

Որպեսզի պատկերը ամբողջական լինի, հ.-ե. egō/ego, ἐγώ, ik, ic, ich, jeg, jag, ég, քմայնացած տարբերակներում՝ հայ. *ես*, լատիշ. *es*, լիտվ. *ąš*, հ. սլավ. *азь* տարբերակներին ավելացնենք ֆիննաուգրական լեզուներից՝ ֆինն. *joka* /սեռ.հ. *jonka*/, «յուրաքանչյուր», *jokin* «որևէ մեկը, որևէ բան» /սեռ.հ. *jonkin*/, էստոն. *iga* «յուրաքանչյուր», իժոր. *joka* «յուրաքանչյուր», հունգար. «ինչպես», սաամ. *jouhke* «յուրաքանչյուր»: *Jokin* – *jonkin*, *joka* – *jonka* տարբերակները թույլ են տալիս այստեղ կցելու հունգար. *engem* «ինձ» դերանունը, հայ. *ինքը*, *ինչ*, *ինձ* /քմայնացած տարբերակներ/ դերանունները:

Չինարենում տարբեր ժամանակներում դերանունների փոխարեն կիրառվել են բառեր, որոնք նշանակում են «ինքը, մարմին, անձամբ» և այլն: Հետաքրքրական է հետևյալ բաժանումը, թեպետ այն կարող է նաև տեղաշարժվել. 1-ին դեմք՝ *ինքը*, *դեմք*, *մարմին*, *կյանք*, *էակ*, *սպրուկ*, *ծառա*, *հիմնական*, 2-րդ դեմք՝ *պարոն*, *տեր*, *մնացյալ*, 3-րդ դեմք՝ *իր*, *մարդ այր մարդ*, *մարմին*, *այլ* [1, 131]:

Արդյո՞ք *egō/ego*, *ἐγώ*, *ik*, *ic*, *ich*, *jeg*, *jag*, *ég*, *eu*, *joka*, *iga*, *jouhke*, *engem*, *ինքը*, ձևերը կապ ունեն *մարդ*, *հոգի*, *անձ* իմաստների հետ:

Այսպես, հայերեն *հոգի* /տարբերակներ՝ *հոգ*, *հոյ*, *հե*, *ոգի*/ (հ.-ե. **poχio-*) արմատի զուգահեռներն են իսլանդ. *hugur*, *hugir* [հյյիլէ] «խելք, միտք, հոգի, ոգի», *huga* «հոգ տանել», *hugsa* «մտածել, մտադրվել», *hugsi* «մտախոհ, ցրված» /հայ. *հոգ-ս*/, *hjukra* «հոգալ, խնամել», դան. *hygge* «հոգ տանել», նորվ. *heng* «զեփյուռ, թույլ քամի», հ.անգլ. *hogian* «հոգ տանել», անգլ. *hag* «*հնգձ*. կանացի չար ոգի», գերմ. *Hauch* «շունչ», *hauchen* «շնչել», *Hege* «խնամք», ռուս. *баба-яга*, լիտվ. *jėgà* «ուժ»: Ոգի արմատին համարժեք են իսլանդ. *voga* «համարձակվել», *veigur* «ուժ», *բնստ*. *veig* «ոգելից խմիչք, գինի», ռուս. *от-вага* բառերը:

Ֆիննաուգրական լեզուներում՝ ֆինն. *henki* «կյանք, հոգի, ոգի, շունչ, օդ», *henkilö* «անձ», *huoku* «շնչառություն», *joukkio* «ամբոխ», *joukko* «ամբոխ, խումբ, ժողովուրդ», էստոն. *hing* «հոգի, ոգի», *hingus* «շունչ», *hingama* «շնչել», *hingamine* «շնչառություն», հծոց «շնչառություն, հոտ», *jõu/k*, *-gu* «ամբոխ», մարի. *енг* «մարդ», *йӕнг* «հոգի, սիրտ», ֆինն. *Jväki* «ժողովուրդ, մարդիկ», էստոն. *vägi* «բանակ, ուժ, զորություն»:

Թերևս, ավելորդ չի լինի նշել խանտ. *ики* «այր մարդ, ամուսին», կոմի *ен* «աստված», իսլանդ. *angan* «բույր, անուշահոտություն», շվեդ. *ånga* «շոգի, գոլորշի», *häxa* «կախարդ», լիտվ. *uksmė* «ստվեր», էսկիմոս. *юк* «մարդ» /երկակի՝ *югы-к*, հոգնակի՝ *югы-т*/, ֆինն. *ukko* «ծերունի, պապիկ, այր մարդ», *uho* «քամի, շնչառություն», *ihme* «հրեշ», էստոն. *õhk* «օդ», *õhe* «հոգոց», *ihu* «մարմին», բառերը: Ֆիններենում գոյություն ունի խիստ ուշագրավ մի բառ՝ *ihminen* (կարել. *ihmine*, էստոն. *inimene*) «մարդ» նշանակությամբ /հմտ. Հայ. *օքմին*, որ նշանակում է մի մարդ/:

Բառային նյութի քննությունը ցույց է տալիս, որ վերոհիշյալ արմատը, ինչպես և *man* արմատը, ընդարձակ տարածում ունի աշխարհի լեզուներում: Իմաստային դաշտը շատ ավելի ընդարձակ է և, ըստ այդմ, առանձին քննարկման նյութ է: Սակայն մեջբերված օրինակներն արդեն իսկ թույլ են տալիս առանձնացնել արմատի հետևյալ տարբերակները՝ *hag-/heg-/hog-/hug-/hyg-/jeg-/jok-/jouk-/ih-/uk-/vog-/veig-/væg-/væk/hang-/heng-/henk-/hing-/hong-/eHG-/* йәһг-/вага-/яга/юк-/юг-: Հայերեն տարբերակներից են *հոգի/ոգի, հով, հեւ, ինքը, ոք*:

Ո՞րն է արմատի նախնական ձևը: Նույնիսկ մեկ առանձին լեզվում այն ներկայացված չէ մեկ տարբերակով: Այնուամենայնիվ, ուշադրության արժանի են նորվեգ. *heng* «թույլ քամի», ֆինն. *henki* «կյանք, հոգի, ոգի, շունչ, օդ» էստոն. *hing* «հոգի, ոգի» մարի. *eHG* «մարդ», йәһг «հոգի, սիրտ» ռնգային ծայնորդ պարունակող տարբերակները [10]:

Ռնգային ո ծայնորդի առկայությունը, բառերի իմաստային սպեկտրը թույլ են տալիս ասելու, որ այս արմատները հայերեն *կեանք* բառի համարժեքներն են: Իր հերթին առանց ծայնորդի տարբերակները համընկնում են հայ. *հոգի* բառին (իսլանդ. *hugur, huga* անգլ. *hag*): Հայերեն *ոգի* բառի դիմաց գտնում ենք իսլանդ. *voga, veigur, veig*, ռուս. *от-вага*, ֆինն. *väki*, էստոն. *vägi*: Բայց չէ՞ որ *կեանք* բառը հայ. *կենալ* բայի հարացուցային ձևերից է, իսկ *ք*-ն հոգնակի թվի ցուցիչ է: Հետևաբար, հայ. *հանգ, հոգի, ոգի* բառերում մթագնած իմաստով քերականական կազմիչ կա, որը չի գիտակցվում հայերենում և այլ լեզուներում [10]: Նշանակում է *ego, է՛ց՛, jeg, jag, ik, ego* և այլ նման ձևերում, ինչպես նաև հայերեն *ինքը, ոք* դերանուններում հետնալեզվային բաղաձայնը (*k/g*) հոգնակի թվի ցուցիչ է, իսկ այդ դերանունները՝ արմատի ձևափոխությունները: Բոլոր այս դերանունների նախնական իմաստն է՝ *մարդ, հոգի, անձ*:

Այսպիսով, հնդեվրոպական անձնական դերանունների *man* և *ego* տիպերը առաջանում են գոյականներից, որոնց նախնական իմաստն է եղել՝ *մարդ, հոգի*, որոնցից բխում են նաև ածանցյալ իմաստներ՝ *այր մարդ, ռազմիկ, իշխան, տեր, մարմին, սիրտ, անձ, գլուխ, ամուսին, թագավոր, առաջնորդ, հերոս, արարած, եղբայր, ուժ, բանակ, մենակ, խումբ, ամբոխ, նաև՝ ոգի, ուրվական, քամի, բույր, սրվեր, գոլորշի, օդ, միտք, ինքը*:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Бабаев К.**, О происхождении личных местоимений в языках мира, Вопросы языкознания, 2009, № 4, с. 121.
2. **Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 2, Դերանուն, Երևան, 1954:

3. **Майтинская К.Е.** Местоимения в языках разных систем, Москва, 1969.
4. **Blažek V.** Who are You, Homo Sapiens Sapiens?, Human affairs, 2, 1992, 2, p.138-149.
5. **Collinder B.** *Fenno-Ugric Vocabulary: An Etymological Dictionary of the Uralic Languages*, Stockholm: Almqvist & Wiksell. (Second, revised edition: Hamburg: Helmut Buske Verlag, 1977.)
6. Etymological Dictionary of Proto-Germanic by Guus Kroonen, /Leiden Indo-European Etymological Dictionary Series, edited by Alexander Lubotsky, Vol. II/, Leiden-Boston, 2013.
7. Etymological Dictionary of the German Language (by F. Kluge), London, 2013.
8. A Handbook of Germanic Etymology (by Orel V.), London.Boston, 2003.
9. A Concise Anglo-Saxon Dictionary, New York, 1916.
10. **Նիկողոսյան Գ.**, Հայ-ֆիննաուգրական լեզվական անչլոթյուններ /Ատենախոսություն/, Երևան, 2011:
11. Etymological Dictionary of Latin and the other Italic languages, by Michiel de Vaan /Leiden Indo-European Etymological Dictionary Series, edited by Alexander Lubotsky, Vol. 7/, Leiden-Boston, 2008.
12. Etymological Dictionary of Greek, by Robert Beeks /Leiden Indo-European Etymological Dictionary Series, edited by Alexander Lubotsky, Vol. 1/, Leiden-Boston, 2010.

Г.В. НИКОГОСЯН

ПРОИСХОЖДЕНИЕ ЛИЧНЫХ МЕСТОИМЕНИЙ

Исследовано происхождение личных местоимений, являющихся одними из наиболее загадочных в сравнительно-историческом языкознании. В исследовании учитывался тот факт, что в большинстве языков мира местоимения происходят от имен существительных. В некоторых языках местоимения до сих пор сохранили первоначальное значение, а в некоторых случаях существительное используется также в качестве местоимения. В статье использован лингвистический материал разных языковых семей, преимущественно данные индоевропейских и финно-угорских языков. Предполагается, что личные местоимения типа *tan* и *ego* происходят от имен существительных с первоначальным значением *человек, душа*. Позже произошло расширение семантического поля и появились новые значения одного и того же корня: *мужчина, самец, воин, рыцарь, господин, муж, государь, герой, народ, дух, призрак, ветер, тень, пар, воздух* и т.п.

Ключевые слова: сравнительно-историческое языкознание, личные местоимения, индоевропейские языки, финно-угорские языки, первоначальное знание, происхождение местоимений.

G.V. NIKOGHOSYAN

THE ORIGIN OF PERSONAL PRONOUNS

The research topic of the article is the origin of personal pronouns which is one of the most obscure mysteries of comparative-historical linguistics. As a base for the investigation is taken the fact that in most languages of the world pronouns originate from nouns. In some languages pronouns have preserved their original meaning, in some cases, the noun is used as a pronoun as well. The material for the research has been taken from different language families, especially from Indo-European and Fenno-Ugric languages. It is supposed that personal pronouns of the types *man* and *ego* in the Indo-European languages come from nouns with the original meanings *man* and *soul*. Later the semantic field was enlarged, and the same root obtained some other meanings, i.e. *male, warrior, knight, lord, body, person, husband, king, commander, hero, creature, army, crowd, spirit, ghost, wind, shadow, vapour, air, etc.*

Keywords: comparative-historical linguistics, personal pronouns, Indo-European languages, Fenno-Ugric languages, original meaning, origin of pronouns.

ՀՏԴ 9(479.25): 82

Հ.Պ. ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆ

ԵՂԵՌՆԸ ԵՎ ԱՆՑՅԱԼԻ ՎԵՐՀՈՒՇԸ ԼԵՎՈՆ-ՉԱՎԵՆ ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆԻ «ՁԵՁ ԵՄ ԴԻՄՈՒՄ, ՏԻԿԻՆՆԵՐ՝ ԵՎ ՊԱՐՈՆՆԵՐ՝» ՎԵՊՈՒՄ

Անդրարդարձ է կատարվում օտարագիր հայ գրողներից մեկի՝ ցեղասպանության թեման շոշափող ստեղծագործությանը:

Աշխարհում ստեղծվել և ստեղծվում է Հայոց Մեծ եղեռնին նվիրված ու եղեռնն արտացոլող մեծածավալ գիտական ու գեղարվեստական գրականություն: Եղեռնն իր կնիքն է դրել ոչ միայն եղեռնից մազապուրծ փրկվածների, այլ նաև հետագա սերունդների ճակատագրերի վրա: Լևոն-Չավեն Սյուրմեյանն օտարագիր հայ գրականության մեջ առաջիններից էր, որ անդրադարձավ եղեռնի թեմային:

Ասանցքային բառեր. եղեռն, իրողություն, զգացողություն, քննադատություն, վերհուշ, ինքնություն:

Լևոն-Չավեն Սյուրմեյանը, գրելով անգլերեն, իր ժողովրդի ապրած ողբերգությունը հանեց համաշխարհային ասպարեզ, ցույց տվեց դարի մեծագույն հանցագործությունը և ապացուցեց հայերի ապրելու իրավունքը: «Ուրիշ վերապրողներ թող գրեն հայերերեն, -վկայում է գրողը,- ես պետք է իմ պատմությունն անգլերեն պատմեի: Ես կրնամ որպես ամերիկյան գրող ավելի մեծ չափով ծառայել իմ ժողովրդիս ու անգլերեն գրելով՝ չեմ դադարել հայ գրող մը ըլլալ» [1]: